

### Գյումրիի հիշողության դափնեկիրները

## Վարպետ Նորիկը



«Ես մեր հինավուրց Գյումրին Հոռոմի պես հավերժական քաղաք է, հազարավոր տարիներ ճամփա է կտրել, եկել-հասել մեր օրերը: Մենակ թե Հոռոմի պես բախտավոր չի եղել, ահեղ երկրաշարժեր, կոիվ, արյունահեղություն, սով ու համաճարակ է տեսել ու էլի իր արհեստ - արվեստը, երգն ու ծիծաղն է շարունակել աշխարհում: Այլագազի չափ սիրտ ունի գյումրեցին: Աստված ու բնությունը տունը կբանդեն, հարազատներին կտանեն, էլի գյումրեցին ճակատագրի երեսին կթռչի, կխնդա ու տուն կշինի: Ու եղպես հազարավոր տարիներ է գյումրին գոյատևել:»

1926 թ-ի երկրաշարժից հետո Ալեքսանդրապոլը դարձրին Լենինական ու սկսեցին արագորեն վերակառուցել. արտելները գործարաններ դարձրին, փողոցները՝ պողոտաներ, մի հարկանի տները՝ բազմահարկեր: Իսկ հնությունների նկատմամբ առավել «բծախնդիր» դարձան: Քանդեցին Ս. Փրկչի փոքր գմբեթներն ու հրապարակի գլաքարե հատակը, և Մոսկվան ու Հոռոմը զարմացան, երբ հավերժի ձեռնափողով դարձրին ձյութապատ հրապարակ: Հեղափոխության ակտիվիստները ծրագրեցին «առաջադիմականը» և վարժանքի հանեցին ծանր կատակը՝ գործը շուտափույթ վերջացնելու: Հենց առաջին շրջադարձին կատակը գլխիվայր իջել էր Գյումրի-չայի մեջ՝ մոլորեցնելով բոլորին: Երևանը խորհուրդ է տալիս. «Գնացեք Թբիլիսի, մասնագետներ բերեք, թող հասնեն»: Դա կպչում է գյումրեցիների ինքնասիրությանը, և վերջիններիս քաղաքի հարկազան Ավետիք Գևորգյանին սեղմում են պատին.

- Հըբը ամոթ չէ մեզի, մենք արհեստարվեստի մարդիկ, ելինք ու էդ հասարակ բանի համար վրացոցն դիմենք:
- Հըբը ինչ էնինք, - հարցնում է Գևորգյանը:
- Կանչե վարպետ Նորիկին, քանիմ ժամկա կհանե:
- Էդ վով է:
- Կիսագրագետ գյումրեցի է, հըբը հազար հատ գիտնական կվալե: Էնոր խելքը ամեն ինչն է կհասնի: Այս գովեստները լսելով՝ նախագահը կանչում է վարպետին, տեսնում չիուսարող արտաքինն ու տարակուսանքով հարցնում.

- Վարպետ, իսիկ պատվի խնդիր է, թե կրնաս, ես կատակը հանե փոսեն, չդիմենք ուրիշին, փոքրանանք էնոնց առաջ:

Վարպետ Նորիկը նայում է փոսի խորությանը, կատակին ու ասում.

- Երկու վագոն շպալ բերել տվեք, եզվան կգամ:

Երկու վագոն շպալ բերեցին ու կիսագրագետ, բայց բնական խելքով վարպետը գործի անցավ: Շպալները շարել տվեց, մի հատ գլանի հարմարացրեց «տալը» ու կամաց-կամաց վեր քաշեց, տակը կրկին շպալ շարեց ու ահռելի ծանրության կատակը փոսից դանդաղորեն դուրս հանեց:

Հրատ Սարգսյան

### Արարատին

Ե՞րբ կգաս դու տուն,  
Մեր սուրբ սրբություն,  
Մեր կյանքի, մեր գոյության,  
Դու մեր պատմության,  
Դարերի վկա մշտաբուն:  
Հիմա երկնապառ,  
Քո գագաթից ձերմակ,  
Նայում ես ջրերին,  
Մեր մայր Արաքսի,  
Որը քարտեզի վրա,  
Օտարի ձեռքով,  
Դարձավ անարդար  
Սահման բաժանման:  
Այսօր մեզ հետ չես,  
Այսօր մեզ անհաս ես,  
Բայց դու անդարձ չես,  
Քանի որ դու միշտ  
Մեր սրտի մեջ ես:  
Դու սլացել ես վեր,  
Բարձր ես բուրից,  
Դու տիրակալն ես  
Հայոց լեռների,  
Անմար փարոսն ես  
Հայոց աշխարհի:  
Հավատում եմ,  
Որ կգա մի օր,  
Մի օր լուսավոր,  
Եվ լանջերին քո  
Հայր կպարի  
Խորխտ քոջարի:



Դարերով կոփված ու մահին հաղթած,  
Կառուցում ենք նորից մեր նոր տունը,  
Եվ մեր լեռների վեհությամբ արբած,  
Օրինում, Հայաստան, քո հողն ու ջուրը:

Մեզ սպառնելով կովում ու ապրում,  
Հայրենիք չքնադ, որ մնաս ազատ,  
Որ ծաղկունքով լցվի քո բնությունը,  
Հողն ու հավատքը մնան անաղարտ:

### Արցախի ազատամարտիկներին

Ժամը հնչեց, ժամը հատուցման,  
Եվ դուք ընտրեցիք ձեր բախտի ճամփան:  
Դուք ելաք մարտի, որ հողն Արցախի  
Երկնքի տակ կապույտ լույսով ողորվի,  
Որ Արցախում բացվի մի նոր լուսաբաց,  
Եվ օտարությունից նա տուն վերադառնա,  
Որ խաղաղ աշխարհի լույսերի մեջ,  
Ազատ Արցախն էլ, իր լույսը վառի,  
Որ Ջանգալատան զանգերն Արցախի,  
Հայերեն դողանջեն,  
Որ մեր սրբություններն ոչ-ոք չանարգի,  
Եվ պատմությունը մեր արյամբ գրված,  
Համայն աշխարհում ճշմարիտ հնչի:  
Մեր կամքը պողպատ էր,  
Ձեր երթն անդարձ,  
Կանցնեն տարիներ,  
Տարիներ անթիվ,  
Ձեր սխրանքն ազնիվ,  
Կհիշեն սերունդներ՝  
Որպես անվախճան,  
Փառքի հուշարձան:



Ինչ ճակատագիրը գցեց հեռու,  
Եվ մենք մնացինք իրարից բաժան,  
Հիմա այրվում եմ կարոտով անհուն,  
Բայց չեմ գտնում հետդարձի ճամփա:

Կարոտի ծովն է իմ հոգին խեղդում,  
Ու սիրտս այրում նրա բոցերում,  
Անհայտ ու անհույս անցնում է օրս,  
Խեղդվում եմ այսպես կարոտի ծովում:

Հուշերը թանձր են, համառ ու ծանր,  
Մարդկային մի կյանք անցած օրերի,  
Փովել են խավար մեզ բաժանումի  
Ճամփեքին երկար, ճամփեքին անծայր:

Ես չեմ մոռանա երբեք իմ կյանքում,  
Քանի ապրում եմ ու դեռ կամ ես,  
Կարոտիդ մշուշն է սիրտս բորբոքում,  
Հազար թևերով ինչ կապում քեզ հետ:

### Երևան

Դու պատմության մեր նոր ուղի,  
Քեզնով ենք մենք քայլում ուղի,  
Քեզնով նայում ողջ աշխարհին,  
Դու ուղեկիցը մեր նոր կյանքի:

### Ստեղծագործում են մեր ընթերցողները

Դու մեր իղձեր, մեր երազանք,  
Դու մեր կարոտ, կարոտի կանչ,  
Դու աշխարհի ամեն ափից  
Մեզ տուն կանչող գանգի դողանք:

Մեր նոր դարի, մեր նոր կաճառ,  
Շունչ ես տվել ժայռին, քարին,  
Ամեն գործո, շենքերդ վառ,  
Թշնամուդ հանդեպ նետ են ու գնդակ:

Դու մեր հոգու անմահ տաճար,  
Պահում ես մեր լույսն անմար,  
Դու խիղճ, բերկրանք, արև, լուսին,  
Մենք՝ զինվորդ, պատրաստ մարտի:



Թևերս փշրած թռչունի նման,  
Ընկել եմ անհայտ իմ ճամփին մոլոր,  
Վատնում եմ տխուր օրերս աշնան,  
Ճիգերս անհույս, ճիգերս անգոր:

Իմ բախտի ճամփին իջել է խավար,  
Հույսեր, երազներ կորան խավարում,  
Խառնվել են իրար և՛ վիշտ, և՛ երազ,  
Սրտումս տագնապ, օրերս դալուկ:

Չի բացվում ինչ համար ոչ մի առավոտ,  
Չի բացվում ճամփին ոչ մի փարոս,  
Ան մութն է պատել իմ ուղին ավեր,  
Եվ կյանքիս պայծառ լույսերը մարել:

### Թոռնուհուս` Ջուլիետա Հովհաննիսյանին

Դու աշխարհ եկար, իմ հույս, իմ շող լույսի,  
Դու ինչ համար ոսկե մի թագ,  
Դու իմ հոգուն անդորր բերիր,  
Դու իմ երազ, դու իմ պատրանք:

Դաշտի ծաղիկ դու նաիրյան,  
Ծնված հեռու, օտար հողում,  
Կենաց ծառիս ծաղկած մի ճյուղ,  
Դալար մնաս դու քո կյանքում:

Կմեծանաս, կյանք կմտնես,  
Կյանքում տեղդ կիմանաս,  
Բախտիդ վրա հույս չդնես,  
Խելքիդ միայն կհավատաս:

Որտեղ էլ որ ապրես, լինես,  
Պիտանի մարդ կյանքում դառնաս,  
Ապրես այնպես, որ ունենաս,  
Փառք ու պատիվ, բարի համբավ:

Մեկ էլ հիշիր իմ ասածը,  
Ուրախության իմ Աստված,  
Արևի տակ ինչքան ապրես,  
Քո ծագումն ու լեզուն չմոռանաս:



Ծովին հարցրի ես մի օր,  
Ինչու դու էլ ինչ պես  
Հանգիստ չունես ու անդորր,  
Ալիքներդ կատաղի  
Փշրում ես ժայռերին,  
Շառաչում ես օրնիբուն,  
Ցասկոտ ողբում, մոնչում:  
- Վերքը խորն է իմ սրտի  
Այսպես տվեց պատասխան:  
- Ինչ ստեղծած օրվանից,  
Անիծել է ինչ Աստված,  
Որ ոչ մի օր իմ կյանքում,  
Չլինեմ հանգիստ ու անվիշտ:  
Ալիքներն այդ կատաղի,  
Որ փշրում եմ ժայռերին,  
Խռովքն է իմ հոգու,  
Եվ ցատումն իմ սրտի,  
Դրանով եմ ես հայտնում,  
Մարդկանց և աշխարհին,  
Որ ես էլ ձեզ նման,  
Ծով վերքերիս, ցավերիս,  
Չունեմ ոչ դեղ, ոչ էլ ճար:



Երկար բաժանումի կարոտից հոգնած,  
Եկել եմ քեզ մոտ, իմ ծննդավայր,  
Ընդունիր որդուդ, որպես սիրող մայր,  
Բացիր նրա դեմ քո դեմքը պայծառ:

Անցած օրերի հուշերով բեռնված,  
Ես սոք եմ դրել նորից քո հողին,  
Անմար թախիծով քո հոգին լցված,  
Անձայն ու անխոս կշտամբում եմ ինչ:

Ճակատագիրը վարվեց շատ դաժան,  
Նա նետեց ինչ քեզանից հեռու,  
Ապրեցի օրեր կարոտին զամված,

Իմ բախտի մոայլ օրերը տանջված:  
Կանգնած եմ ահա ծանոթ փողոցում,  
Իմ լավ ընկերներ անցած օրերի,  
Քանիսդ արդեն չկաք այս կյանքում,  
Ես հիշում եմ ձեզ անուն առ անուն:

Կարոտի թախիծը ինչ ընկեր դարձած,  
Այրում է հոգիս անմար կրակում,  
Անողորմ հուշերի անվերջ շղթան,  
Հառնում է դեմս ու չի հեռանում:

Օ~, հուշեր, հուշեր անվերջ ու անհուն,  
Նախատում եք ինչ ու դատապարտում,  
Ճամփան քո բախտի ընտրեցի դու,  
Ինչու ես հիմա դու մորմոք ապրում:

Եկել եմ հիմա, եկել եմ գիրկդ,  
Ընդունիր որդուդ ինչպես անցյալում,  
Ներիր, փարատիր, ներիր քո որդուն,  
Չէ որ գթությամբ առատ ես դու:



Կփակվեն մի օր  
Բանտերը բոլոր,  
Փականք կորվի  
Նրանց դռներին,  
Կգան սերունդներ,  
Կիրթ ու լուսավոր,  
Կայցելեն նրանք  
Խուցերը մթին,  
Որպես թանգարան  
Հեռու անցյալի:

### Իմ կյանքը

Հասել եմ արդեն իմ օրհասին,  
Տեսել այս կյանքի հինը և նորը,  
Վկան եմ եղել նրա լավին ու վատին,  
Նրա հետ քայլել, հասել այս օրը:

Տվել եմ կյանքին ինչ կարող էի տալ,  
Նվիրվել նրան իմ ողջ եռությամբ,  
Ունեցել եմ կյանքում և՛ անկում, և՛ փառք,  
Գիշերներ սև մութ, ցերեկներ պայծառ:

Ինչ ցանկ եմ, այն էլ հնձել եմ,  
Ճիշտ է ժողովուրդն իր փորձով ասել,  
Եղել է արտիս հասկերը թեքվել են,  
Եղել է ցանածս ես չեմ հավաքել:

Չեն եղել ճամփաներս ուղիղ ու հարթ,  
Կածաններ եմ անցել նեղ ու վատ,  
Հաճախ կանգնել եմ անդունդի եզրին,  
Եվ հրաշքով փրկվել ես կործանումից:

Երջանիկ օրեր ևս շատ եմ տեսել,  
Նրանք չեն ընկել որպես մանասա,  
Պայքարով եմ ես նրանց հասել,  
Սկուտեղի վրա ինչ չեն ընծայել:

Կյանքում անհոս ջուր չեմ եղել,  
Իմ հունն եմ ունեցել, այդ հունով հոսել,  
Արգելքներ դեմս շատ են ծառայել,  
Հաղթահարել եմ նրանց ու անցել:

Շատերի նման ես էլ իմ օրերում,  
Ցավեր ու դավեր շատ եմ ունեցել,  
Չեմ կքել երբեք, ես չեմ ընկրկել,  
Իմ բախտի սայլը ես եմ քարշ տվել:

Լծկան եմ եղել և ոչ մաճկալ...

Հիմա հասել եմ իմ վերջնակետին,  
Եվ պեղում եմ իմ օրերն ապրած,  
Թերթում մեկ առ մեկ էջերը կյանքիս,  
Եվ հիշում գործեր արած ու չարած:

Շատ անգամ նավակս հանձնել եմ ծովին,  
Թեկուզ նրա հետ կոիվ եմ տվել,  
Բայց նա ինչ քչել է տարել դեպի  
Անահման կապույտը հեռվի  
Հետ բերել նավակով, ինչ ափ է նետել:



Ճամփաներ անցա այս մեծ աշխարհում,  
Տեսա քաղաքներ և՛ փոքր, և՛ մեծ,  
Ա~խ, ապրեցի քեզանից հեռու,  
Չիմացա՝ կյանքիս ճամփան լուկ դու ես:

### Ի.Գ.-ին

Հեռացանք իրարից, տարիներ անցանք,  
Բայց դու մնացիր, մնացիր ինչ հետ,  
Դու դարձար ծաղիկն այն անհաս,  
Որին ձգտեցի ես անհատրեն:

Հենրիկ Հովհաննիսյան